ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1024-Ա «20» մարտի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի Հ.4945-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ի կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 21.01.2025 թվականի եզրակացությունը, ըստ օրենքի 06.04.2022 թվականի ժառանգության իրավունքի վկայագրերը և քաղաքացու դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2008 թվականի հոկտեմբերի 28-ի «Բրյուսովի փողոցի հ.11/12 բնակելի տան նկատմամբ Սամսոն Սամսոնի Դանիելյանի, Անուշ Յուրիկի Դանիելյանի, Արամ Հայրապետի Դանիելյանի, Լենա Սմբատի Դովլաթյանի, Հայրապետ Սամսոնի Դանիելյանի, Էլմիրա Հրայրի Դանիելյանի, Արման Հայրապետի Դանիելյանի, Արմեն Արթուրի Դանիելյանի, Նարինե Սամսոնի Դանիելյանի, Արթուր Սամսոնի Դանիելյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.4945-Ա որոշման/այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և րացումը.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024 թվականի հ. 204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ «ք.Երևան Բրյուսովի փողոցի հ.11/12 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման»:

2) Որոշման 1-ին կետում «83.14» թիվը փոխարինել «88.43» թվով:

3) Որոշման վերնագրից, նախաբանից, 5-րդ կետերից հանել Սամսոն Սամսոնի Դանիելյանի և Լենա Սմբատի Դովլաթյանի բառերը:

4) Որոշման 1-ին կետից հանել «Սամսոն Սամսոնի Դանիելյանի (ծնված 10.10.1931թ.) և «Լենա Սմբատի Դովլաթյանի(ծնված 13.11.1932թ.)» բառերը:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ